

## ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՂՈՒԿԻ ՆԵՐԳՐԱԿԱԾՈՒԹՅՈՒՆԸ ԼԵՂՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱԿՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

### Արշակ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

*ՀՀ ՉԱԱ փոխտնօրինիչ, սոցիոլոգիայի և  
իրավունքի ինստիտուտի ասպիրանտ*

Եվրոպական միությունը (այսուհետև՝ ԵՄ), ի տարբերություն վրաց-աբխազական և վրաց-օսական հակամարտությունների, գործնականում ուղղակիորեն ներգրավված չէ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելու գործում: Սակայն դա բոլորովին չի նշանակում, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելը դուրս է ԵՄ ուշադրությունից: Ավելին, վերջին տարիներին բավական աճել է ԵՄ՝ այդ խնդրում դերակատարություն ունենալու ցանկությունը: ԵՄ-ն Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելու վերաբերյալ ունի սեփական մոտեցումներ, որոնց շրջանակներում էլ իրականացնում է իր սահմանափակ գործունեությունը և ուրվագծում հետագայում այն մեծացնելու հնարավորությունները:

ԵՄ ի սկզբանե ուղղակիորեն չներգրավվեց Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելու գործում: Դա պայմանավորված էր հիմնականում մի շարք քաղաքական խնդիրներով, ինչպես նաև ձգնաժամերի կառավարմանն ուղղված համապատասխան մեխանիզմների և հակամարտության կողմերի ցանկության բացակայությամբ<sup>1</sup>: Ավելին, ԵՄ, ելնելով քաղաքական դրդապատճառներից, ի տարբերություն Աբխազիայի և Հարավային Օսիայի, Լեռնային Ղարաբաղում չիրականցրեց հակամարտությունները կարգավորելուն ուղղված ծրագրեր<sup>2</sup>: Այս գործում ԵՄ-ն անուղղակիորեն ներգրավվեց 1997 թ., երբ Ֆրանսիան դարձավ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (այսուհետև՝ ԵԱՀԿ) Մինսկի խմբի<sup>3</sup> համանախագահ<sup>4</sup>: Դա առաջացրեց Ադրբեջանի դժգոհությունը, քանի որ վերջինս Ֆրանսիան համարում էր հայամետ պետություն՝ նկատի ունենալով սփյուռքը<sup>5</sup>: Քաղաքական տեսանկյունից Ֆրանսիան ընկալվում էր ոչ թե որպես առանձին պետություն, այլ որպես

<sup>1</sup> Հարկ է նշել, որ վերջին տարիներին Ադրբեջանը հակված է ավելացնելու միջազգային ներգրավվածությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործում:

<sup>2</sup> St' u International Crisis Group, Conflict Resolution in the South Caucasus: The EU's Role, Crisis Group Europe Report No. 173 (www.crisisgroup.org), Tbilisi/Brussels, 20 March 2006, p. 21:

<sup>3</sup> 1997 թ. մինչ օրս ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ են Ֆրանսիան, Ռուսաստանը և ԱՄՆ-ը: ԵԱՀԿ Մինսկի խմբում են նաև Բելառուսը, Գերմանիան, Իտալիան, Պորտուգալիան, Նիդերլանդները, Շվեյցարիան, Ֆինլանդիան, Թուրքիան, ինչպես նաև Հայաստանը և Ադրբեջանը:

<sup>4</sup> St' u International Crisis Group, Nagorno-Karabakh: A Plan for Peace, Crisis Group Europe Report No. 167 (www.crisisgroup.org), Tbilisi/Brussels, 11 October 2005, p. 8:

<sup>5</sup> St' u Tracey C. German, Visibly Invisible: EU Engagement in Conflict Resolution in the South Caucasus, European Security Vol. 16, Issue 3-4, Routledge, 2007, p. 367:

ԵՄ դիրքորոշումը ներկայացնող կողմ<sup>6</sup>: Ֆրանսիան վստահեցնում էր, որ ԵՄ-ն լավ տեղեկացված է զարգացումներին, և նրա շահերը հաշվի են առնվում<sup>7</sup>: Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելու գործում Ֆրանսիայի ներկայությունը տվյալ ժամանակահատվածում ԵՄ արտաքին քաղաքականությանը բնորոշ դրսևորում է: Ինչպես վրաց-աբխազական, այնպես էլ Լեռնային Ղարաբաղի հակամարտության դեպքում ԵՄ իրավական տեսանկյունից որպես միջազգային դերակատար ներգրավված չէր, սակայն ապահովում էր իր քաղաքական ազդեցությունը մեկ կամ մի քանի անդամ պետությունների միջոցով:

Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելու վերաբերյալ ԵՄ-ի մոտեցումներն ամրագրված են մի շարք իրավական և քաղաքական ակտերում: 1988 թ. սկսած՝ Եվրոպական խորհրդարանը, անդրադառնալով Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին, ընդունել է խորհրդային Հայաստանի իրադարձություններին, բռնաճնշումներին և իրավիճակին վերաբերող մի շարք բանաձևեր: Եվրոպական խորհրդարանը մտադիր էր ուշադիր հետևել խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունում (այսուհետև՝ ԽՍՀՄ) տարբեր ազգերի՝ ինքնությունը, մշակույթը և ինքնավարությունը պահպանելու փորձերին<sup>8</sup>: Միանշանակորեն որպես այդպիսի փորձ էր դիտվում Լեռնային Ղարաբաղում սկսված շարժումը: Եվրոպական խորհրդարանն աջակցում էր Լեռնային Ղարաբաղի հայերի՝ Հայաստանին վերամիավորվելու պահանջին և կոչ էր անում ԽՍՀՄ իշխանություններին հաշվի առնել հայկական կողմի փոխզիջումային առաջարկները<sup>9</sup>: Մատնանշվում էր Ստալինի կողմից Լեռնային Ղարաբաղի կամայական հանձնումն Ադրբեջանին, ինչպես նաև դատապարտվում Ղարաբաղ կոմիտեի ղեկավարների ձերբակալությունը՝ կոչ անելով անհապաղ ազատ արձակել նրանց<sup>10</sup>: Եվրոպական խորհրդարանը նաև կոչ էր անում Եվրոպական հանձնաժողովին և ԵՄ խորհրդին հայտարարությամբ հանդես գալ ԽՍՀՄ իշխանությունների առջև, որպեսզի նրանք ապահովեն Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի շրջափակումն անհապաղ և ամբողջական վերացումը, ինչպես նաև գտնեն տևական քաղաքական լուծում Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի համար<sup>11</sup>: Եվրոպական խորհրդարանը շարունակեց ակտիվորեն հետևել Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը մինչ կողմերի միջև հրադարար կնքվելը:

Հետագա տարիներին՝ մասնավորապես մինչ 2003 թ. Հարավային Կովկասում ԵՄ հատուկ ներկայացուցիչ նշանակելը, Լեռնային Ղարաբաղի հարցում ԵՄ քաղաքականությունը կարելի է բնութագրել որպես բավական սահմանափակ<sup>12</sup>: Այս ժամանակահատվածում Եվրոպական խորհրդարանը ընդունեց Լեռնային Ղարաբաղի հակամար-

<sup>6</sup> ԵԱՀԿ Մինսկի խմբի ֆրանսիացի համանախագահը տարին մեկ անգամ ԵՄ ինստիտուտներին տեղեկացնում է Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելուն վերաբերող զարգացումները:

<sup>7</sup> St' u International Crisis Group, Nagorno-Karabakh: A Plan for Peace, Crisis Group Europe Report No. 167 (www.crisisgroup.org), Tbilisi/Brussels, 11 October 2005, p. 10:

<sup>8</sup> St' u European Parliament resolution on recent events in Soviet Armenia, 10 March 1988 (Official Journal C 94/117, 11.4.1988):

<sup>9</sup> St' u նույն տեղում, 7 July 1988 (Official Journal C 235/106, 12.9.1988):

<sup>10</sup> St' u նույն տեղում, 19 January 1989 (Official Journal C 47/130, 27.2.1989):

<sup>11</sup> St' u նույն տեղում, 18 January 1990 (Official Journal C 38/81, 19.2.1990):

<sup>12</sup> St' u Michael Kambeck, Sargis Ghazaryan (editors), Europe's Next Avoidable War: Nagorno-Karabakh, Palgrave Macmillan, Basingstoke, 2013, p. 158:

տությանն առնչվող ընդամենը երկու բանաձև: Առաջինում հավանություն էր տալիս ԵԱՀԿ Մինսկի խմբի խաղաղության ծրագրին՝ գտնելով, որ ներկայացված առաջարկները կօգնեն կողմերին դուրս գալ փակուղուց, ինչպես նաև կոչ էր անում ԵԱՀԿ Մինսկի խմբին շարունակել հակամարտության տևական լուծում գտնելուն ուղղված ջանքերը<sup>13</sup>: Երկրորդում Հայաստանին և Ադրբեջանին կոչ էր արվում կենտրոնացնել ջանքերը ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդությամբ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելու ուղղությամբ, ինչպես նաև Ստեփանակերտի իշխանություններին՝ կառուցողական մոտեցում ցուցաբերել խաղաղության գործընթացին<sup>14</sup>:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության վերաբերյալ ԵՄ ընդունած բանաձևերի շարքում հատուկ ուշադրության է արժանի Հարավային Կովկասում ԵՄ ռազմավարության անհրաժեշտության մասին բանաձևը: Վերջինիս համաձայն՝ ԵՄ պետք է ունենա ավելի ակտիվ քաղաքական դերակատարություն տարածաշրջանում՝ որդեգրելով այնպիսի ռազմավարություն, որը կհամատեղի ԵՄ փափուկ ուժը և կոշտ մոտեցումը: Եվրապական խորհրդարանը կոչ է անում հայկական ուժերը դուրս բերել Ադրբեջանի բուլոր գրավյալ տարածքներից՝ թույլատրելով տեղահանված բնակչության վերադարձը, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղին տրամադրել որոշակի միջանկյալ կարգավիճակ մինչև վերջնական կարգավիճակը որոշելը, որը հնարավորություն կընձեռի տարածաշրջանում ապահովելու հայ և ադրբեջանցի բնակչության խաղաղ համակեցությունը և համագործակցությունը<sup>15</sup>: Հարկ է նշել, որ բանաձևն ընդունելուց հետո հնչեցին մի շարք իրարամերժ կարծիքներ. դա մասնավորապես պայմանավորված էր բանաձևում առկա ինչպես դրական, այնպես էլ բացասական ձևակերպումներով:

Եվրոպական խորհրդարանի ընդունած բանաձևերն ունեցան երկակի կարևոր նշանակություն, քանի որ, բացի ԵՄ մոտեցումները և քաղաքական կամքն արտահայտելուց, դրանք նաև հրավիրեցին ԵՄ մյուս ինստիտուտների ուշադրությունը Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրին: Բացի այդ, ԵՄ ընդունած բանաձևերն իրավական որակում տվեցին ԼՂ շուրջ ստեղծված իրավիճակին: Պետք է փաստել, որ Եվրոպական խորհրդարանը բավական ծանրակշիռ քաղաքական մարմին է, որը Լիսաբոնի պայմանագրից հետո էապես ակտիվացրել է իր մասնակցությունը ԵՄ արտաքին քաղաքականություն մշակելու գործընթացում<sup>16</sup>: Միաժամանակ հարկ է նշել, որ ԵՄ ընդունած բանաձևերն իրավական տեսանկյունից պարտադիր ուժ չունեն և միայն խորհրդատվական բնույթի են, սակայն պարտադիր են ԵՄ արտաքին քաղաքականության համար:

2005 թ. մարտին Եվրոպական հանձնաժողովը ԵՄ խորհրդին ներկայացված հաղորդագրությունում Լեռնային Ղարաբաղի հակամարտությանն անդրադարձ կատարեց, որը Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կողմերի համար դիտում է գերակա

<sup>13</sup> St´u European Parliament resolution on support for the peace process in the Caucasus, 11 March 1999 (Official Journal C 175/251, 21.6.1999):

<sup>14</sup> St´u European Parliament resolution on the communication from the Commission to the Council and the European Parliament on the European Union’s relations with the South Caucasus, under the partnership and cooperation agreements, 28 February 2002 (Official Journal C 293 E/96, 28.11.2002):

<sup>15</sup> St´u European Parliament resolution on the need for an EU strategy for the South Caucasus, 20 May 2010 (Official Journal C 161 E/136, 31.5.2011):

<sup>16</sup> St´u «ԵՄ բացում է իր խաղաքարտերը», Արթուր Ղազինյանի հարցազրույցը «Ռեզնում» գործակալությանը Եվրոպական խորհրդարանի ընդունած թիվ 2216 բանաձևի վերաբերյալ, 01.06.2010:

խնդիր, իսկ տարածաշրջանի համար՝ լուրջ խոչընդոտ<sup>17</sup>: 2006 թ. Հայաստանի և Ադրբեջանի Եվրոպական հարևանության քաղաքականության (այսուհետև՝ ԵՀՔ) գործողությունների ծրագրերում որպես գործընկերության նոր հեռանկար նշվեց ԵՄ շարունակական հանձնառությունը՝ աջակցել Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելուն՝ օգտվելով ԵՄ-ին մատչելի գործիքներից: Այդ ամենը նախատեսվում է անել ԵԱՀԿ սերտ խորհրդակցությամբ: ԵՄ նաև պատրաստակամություն է հայտնում դիտարկել հակամարտության կարգավորման և հետհակամարտային վերականգնողական գործընթացներին իր հետագա ներգրավվածության հնարավորությունները: Հայաստանի և Ադրբեջանի՝ ԵՀՔ գործողությունների ծրագրերում Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելն առաջնային ոլորտ է<sup>18</sup> և որպես հատուկ գործողություն նախատեսում է խորացնել ԵՄ շահագրգիռ կողմերի երկխոսությունը<sup>19</sup>: Հայաստանի՝ ԵՀՔ գործողությունների ծրագիրը նախատեսում է նաև ուսումնասիրել ԵՄ մարդասիրական և ակնազերծման նախաձեռնություններին աջակցություն ցուցաբերելու հնարավորությունները: Երկու գործողությունների ծրագրերում միաժամանակ նախատեսվում է Հարավային Կովկասում ԵՄ Հատուկ ներկայացուցչի միջոցով ուժեղացնել համագործակցությունը՝ աջակցելով հակամարտությունը կարգավորելուն<sup>20</sup>:

Հայաստանի և Ադրբեջանի՝ ԵՀՔ գործողությունների ծրագրերը Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը մտցրին ԵՀՔ օրակարգ: Թեև ԵՀՔ գործողությունների ծրագրերը քաղաքական փաստաթղթեր են և նպատակ ունեն ուրվագծել ԵՄ-ի հետ համագործակցության նպատակները, այդուհանդերձ դրանցում Լեռնային Ղարաբաղի հակամարտությանը վերաբերող դրույթները կարող են ԵՄ գործունեություն իրականացնելու իրավական հիմք դառնալ: Սակայն ԵՀՔ՝ որպես ԵՄ քաղաքականության գործիք, Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելու հարցում սահմանափակ է իր օգտակարությամբ և չի կարող արդյունավետ անդրադառնալ խնդրի լուծմանը<sup>21</sup>:

Ի տարբերություն ԵՀՔ-ի՝ Արևելյան գործընկերության (այսուհետև՝ ԱԳ) օրակարգում Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումն ուղակիորեն ներառված չէ: Իրավական տեսանկյունից դա նշանակում է, որ ԱԳ հիմնադիր փաստաթղթերը չեն պարունակում Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանը վերաբերող դրույթներ: Միայն ԱԳ երրորդ գագաթնաժողովում ընդունված համատեղ հռչակագիրն է անդրադարձել Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանը: ԱԳ գագաթնաժողովի մասնակիցները մասնավորապես ողջունել են Վիեննայում ԵԱՀԿ Մինսկի

<sup>17</sup> St' u Communication from the Commission to the Council, European Neighbourhood Policy - Recommendations for Armenia, Azerbaijan, Georgia and for Egypt and Lebanon, Brussels, 2.3.2005 COM(2005) 72 final:

<sup>18</sup> Ադրբեջանի՝ ԵՀՔ գործողությունների ծրագրում Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելը թիվ մեկ առաջնային ոլորտն է, իսկ Հայաստանի՝ ԵՀՔ գործողությունների ծրագրում՝ թիվ յոթը:

<sup>19</sup> Ադրբեջանի՝ ԵՀՔ գործողությունների ծրագրում «շահագրգիռ կողմերի» փոխարեն օգտագործվում է «շահագրգիռ պետություններ» եզրույթը, որի նպատակն է բացառել ԵՄ-ԼՂՀ երկխոսությունը:

<sup>20</sup> St' u EU-Armenia European Neighbourhood Policy Action Plan 2006, EU-Azerbaijan European Neighbourhood Policy Action Plan 2006 (ec.europa.eu):

<sup>21</sup> St' u Stefan Wolff, The European Union and the Conflict over the Nagorno-Karabakh Territory (www.stefanwolff.com), Report prepared for the Committee on Member States' Obligations Parliamentary Assembly of the Council of Europe, Berlin, 4-5 November 2007, p. 2:

խմբի համանախագահների հովանու ներքո Հայաստանի և Ադրբեջանի նախագահների հանդիպումը և նրանց ձեռք բերած պայմանավորվածությունը հակամարտությունը խաղաղ կարգավորելու բանակցությունները շարունակելու վերաբերյալ<sup>22</sup>։ Ինչպես հայտնի է, ԱԳ-ն որպես համագործակցության ձևաչափ նախատեսում է խթանել գործընկեր պետությունների միջև բազմակողմ հարաբերությունների զարգացումը և ամրապնդումը։ Հետևաբար Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, որում ներգրավված են երկու գործընկեր պետություններ, վտանգում է ԱԳ նպատակների արդյունավետ իրականացումը՝ ստիպելով ԵՄ-ին առավել մեծ ուշադրություն դարձնել հակամարտությանը։ ԵՄ ԱԳ-ի միջոցով փորձում է ամրապնդել անվտանգությունը տարածաշրջանում՝ ԵՄ-ն արդյունավետորեն մոտեցնելով գործընկերներին։ ԱԳ, ինչպես ԵՀՔ միաժամանակ նպատակ ունեն ԵՄ հարևանությամբ ապահովել կայունություն և խաղաղություն՝ տարածաշրջանում ամրապնդելով վստահության մթնոլորտ<sup>23</sup>։ ԱԳ նշված նպատակները եթե անգամ ուղղակիորեն ուղղված չեն Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելուն, ապա ստեղծում են հակամարտությունը փոխակերպելու արդյունավետ մթնոլորտ։

Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելու գործում ԵՄ ազդեցության հնարավոր միջոց կարող է լինել նաև ԱԳ շրջանակներում գործընկեր պետությունների հետ նախատեսված փոխկապակցման համաձայնագրեր կամ համագործակցության իրավական հիմքերին առնչվող ցանկացած այլ փաստաթուղթ կնքելը, որոնց շնորհիվ ԵՄ գործընկերներին առավել կմոտեցնի հակամարտության կարգավորմանը<sup>24</sup>։ Այս ենթադրությունը վերահաստատում է Վիլնյուսի գագաթնաժողովին ընդառաջ ԱԳ ձանապարհային քարտեզ մշակելու համատեղ հաղորդագրությունը, որտեղ ԵՄ ակնկալում է Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը առավելագույնս արագ կարգավորելու արժանահավատ և կայուն ջանքեր։ Մասնավորապես, ԵՄ լիարժեք աջակցում է ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդական ջանքերին, ինչպես նաև Մադրիդյան սկզբունքներին<sup>25</sup>։ Հատկանշական է, որ ԵՄ ինչպես ԵՀՔ, այնպես էլ ԱԳ դեպքում խուսափում է Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելու հարցում ակտիվ դերակատարություն ստանձնելուց՝ հոգուտ ԵԱՀԿ Մինսկի խմբի ձևաչափի։

Հարավային Կովկասում և Վրաստանի ձգնաժամի հարցերով ԵՄ Հատուկ ներկայացուցիչը տեղում ԵՄ՝ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորող հիմնական գործիքն է<sup>26</sup>։ Սկսած 2003 թ.՝ Հեյկկի Թալվիթիեի մանդատը նախատեսում էր օժանդակել Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելուն՝ մասնավորապես ա-

<sup>22</sup> St' u Joint Declaration of the Eastern Partnership Summit, Eastern Partnership: the way ahead, Vilnius, 29 November 2013 (17130/13 Presse 516):

<sup>23</sup> St' u Michael Kambeck, Sargis Ghazaryan (editors), նշվ. աշխ., p. 176:

<sup>24</sup> St' u Zaur Shiriyev, Challenges for the EU in the resolution of the Nagorno-Karabakh conflict: An Azerbaijani perspective, European Policy Centre (EPC) Policy brief (www.epc.eu), Brussels, 17 June 2013, p. 2:

<sup>25</sup> St' u Joint Communication to the European Parliament, the Council, the European Economic and Social Committee and the Committee of the Regions, Eastern Partnership: A Roadmap to the autumn 2013 Summit, Brussels, 15.5.2012 JOIN(2012) 13 final:

<sup>26</sup> St' u Marco Sidi, Nagorno Karabakh: Security Situation, Final report for the workshop organized by the Trans European Policy Studies Association (www.tepsa.eu), Hosted at the European Parliament, Directorate-General for External Policies of the Union, Subcommittee on Security and Defence, Brussels, 20 June 2012, p. 7:

ջակցելով ԵԱՀԿ Մինսկի խմբի ձևաչափին<sup>27</sup>: 2006 թ. ԵՄ հատուկ ներկայացուցչի մանդատի ամրապնդումն իրավական տեսանկյունից ընդլայնեց Պիտեր Սեմենբիի գործունեության շրջանակները Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելու գործում: Նոր մանդատը նախկինի սովորական օժանդակության փոխարեն ԵՄ հատուկ ներկայացուցչին հնարավորություն ընձեռեց ներդրում ունենալ հակամարտությունը կարգավորելու գործընթացում և աջակցել կարգավորման ջանքերին: Սակայն գործնականում մանդատի ընդլայնումը միայն կարևոր քաղաքական ազդանշան էր ԵՄ-ի կողմից և չհանգեցրեց էական փոփոխությունների<sup>28</sup>: Մինչ օրս ԵՄ հատուկ ներկայացուցչի մանդատի բովանդակությունը Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելու շրջանակում մնում է անփոփոխ: Հարավային Կովկասում և Վրաստանի ճգնաժամի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցչի գործունեությունը հիմնականում ուղղված է Վրաստանում առկա հակամարտությունները կարգավորելուն և պայմանավորված է մի շարք քաղաքական հանագամանքներով, ինչպես նաև վերջինիս մանդատի նոր շեշտադրմամբ: Թեև ԵՄ հատուկ ներկայացուցչի մանդատը նախատեսում է Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելու գործում առավել ակտիվորեն ներգրավելու բոլոր անհրաժեշտ իրավական հիմքերը, սակայն վերջիններիս առկայությունը բավարար չէ գործնականում դրական արդյունք ստանալու համար, քանի որ առկա են ԵՄ Հատուկ ներկայացուցչի հնարավորությունները սահմանափակող մի շարք խոչընդոտներ: Դրանց շարքում կարելի է նշել ԵԱՀԿ Մինսկի խմբի բանակցություններում ԵՄ Հատուկ ներկայացուցչի ներգրավված չլինելը, Բրյուսելի կողմից ակտիվ քաղաքական աջակցության պակասը, ինչպես նաև հակամարտությունների կարգավորմանն ուղղված ԵՄ քաղաքականության հստակ ուղենիշների բացակայությունը<sup>29</sup>:

Հարկ է նաև նշել, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելու գործում Հայաստանում և Ադրբեջանում բավական պասիվ գործունեություն են իրականացնում ԵՄ պատվիրակությունները: Ինչպես Վրաստանի դեպքում, այստեղ նույնպես պատվիրակությունների լիազորություններն ուղղակիորեն չեն առնչվում հակամարտությունները կարգավորելուն և սահմանափակվում են միայն աջակցություն տրամադրելով և տարբեր ոլորտներում ծրագրեր իրականացնելով:

Սյուն ուսումնասիրության համատեքստում հատկանշական է անդրադառնալ նաև Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված Եվրոպական գործընկերության ծրագրին (EPNK), որով ԵՄ-ն աջակցում է քաղաքացիական հասարակության խաղաղություն հաստատելու ջանքերին: Ծրագիրը հիմնվել է Կայունության գործիքի շրջանակներում, որը ԵՄ հատուկ ֆինանսական գործիք է՝ ուղղված աշխարհում հակամարտությունները խաղաղ կարգավորելուն, լարվածությունը թուլացնելուն և հետհակամարտային վերականգնմանը<sup>30</sup>: Ծրագրում ներգրավված են հինգ եվրոպական հասարակական կազմակերպություններ, որոնց հիմնական խնդիրը քաղաքական գործիչների, լրատվամիջոցների և քաղաքացիական հասարակության միջև ակ-

<sup>27</sup> St´u Council Joint Action 2003/496/CFSP of 7 July 2003 (Official Journal L 169/74, 8.7.2003):

<sup>28</sup> St´u Stefan Wolff, նշվ. աշխ., pp. 3-4:

<sup>29</sup> St´u Marco Siddi, Engaging external actors: The EU in the geopolitics of the Nagorno-Karabakh conflict, IEP (Institut für Europäische Politik) Policy Briefs on Enlargement and Neighbourhood, No. 7/2012 (www.iep-berlin.de), Berlin, 2012, p. 4:

<sup>30</sup> St´u Regulation (EC) No. 1717/2006 of the Parliament and of the Council of 15 November 2006 establishing an Instrument for Stability (Official Journal L 327/1, 24.11.2006):

տիվ երկխոսություն ապահովելն է<sup>31</sup>: Ներկայումս արդեն մեկնարկել է ծրագրի երկրորդ փուլը, որը կտևի երեք տարի<sup>32</sup>: Հարկ է նշել, որ իրավական տեսանկյունից Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանն ուղղված եվրոպական գործընկերության ծրագիրը ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող նախաձեռնություն է, սակայն ԵՄ-ի կողմից Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորմանը միտված ուղղակի իրականացվող գործողություն չէ:

ԵՄ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելու անուղղակի գործունեությունն ուսումնասիրելիս անհրաժեշտություն է զգացվում զուգահեռաբար անդրադառնալ այս հարցում ԵՄ գործունեության հեռանկարներին և հնարավորություններին՝ ներկայացնելով մի շարք առաջարկներ ԵՄ հետագա ներգրավվածությունն ընդլայնելու ուղղությամբ: Նախ և առաջ ԵՄ-ն պետք է իրականացնի հակամարտության առավել խորը վերլուծություն. այն պետք է կրի շարունակական բնույթ՝ հիմնականում ուշադրությունը կենտրոնացնելով վտանգները գնահատելու, նոր ձևաչափեր բացահայտելու և քաղաքականությունն ընդլայնելու տարբերակների վրա: ԵՄ առաջարկում է նաև ստեղծել խումբ, որը կաջակցի միջնորդական ջանքերին՝ օգնելով խորացնել հակամարտող կողմերի երկխոսությունը<sup>33</sup>: Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելու գործում ԵՀՔ-ն առավել արդյունավետ դարձնելու համար առաջարկվում է այն փոխակերպել հակամարտությունները կանխելու և կարգավորելու գործիքի<sup>34</sup>: ԵՀՔ շրջանակներում ԵՄ-ն պետք է նաև վերանայի Հայաստանի և Ադրբեյջանի՝ ԵՀՔ գործողությունների ծրագրերը և վերացնի առկա անհամատեղելիությունները: Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը պետք է ներառվի փոխկապակցման համաձայնագրերի շուրջ բանակցությունների կամ ցանկացած այլ հնարավոր ձևաչափով համագործակցության օրակարգում: Այս ամենին զուգահեռ՝ առաջարկություններ են շրջանառվում ԵԱՀԿ Մինսկի խմբում ԵՄ անմիջական ներգրավվածության հնարավորության մասին՝ Ֆրանսիայի փոխարեն<sup>35</sup> կամ Հարավային Կովկասում և Վրաստանի ձգնաժամի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցչին ներգրավելու միջոցով<sup>36</sup>: Միաժամանակ բազմաթիվ են Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելու գործում ԵՄ հատուկ ներկայացուցչի մանդատն ընդլայնելու առաջարկները, որոնք հիմնականում նպատակ ունեն առավել արդյունավետ դարձնել վերջինիս գործունեությունը: Եվ ի վերջո ԵՄ-ին անհրաժեշտ է ապահովել իր ներկայացուցիչների մուտքը հակամարտության գոտի և մշակել հետհակամարտային ծրագրեր<sup>37</sup>: Ինչպես կարելի է նկատել, ԵՄ-ին ուղղված առաջարկները հիմնականում նախատեսում են համապատաս-

<sup>31</sup> Տե՛ս European Partnership for the Peaceful Settlement of the Conflict over Nagorno-Karabakh, EPNK Phase 1, Project Summary (eas.europa.eu):

<sup>32</sup> Տե՛ս The European Union continues to support civil society peace building efforts over Nagorno-Karabakh, Brussels, 6 November 2012 (A 490/12):

<sup>33</sup> Տե՛ս Richard Giragosian, Challenges for the EU in the resolution of the Nagorno-Karabakh conflict: An Armenian perspective, European Policy Centre (EPC) Policy brief (www.epc.eu), Brussels, 17 June 2013, p. 3:

<sup>34</sup> Տե՛ս Stefan Wolff, նշվ. աշխ., p. 4:

<sup>35</sup> Տե՛ս Marco Siddi, Engaging external actors: The EU in the geopolitics of the Nagorno-Karabakh conflict, p. 4:

<sup>36</sup> Տե՛ս Nicu Popescu, EU Foreign Policy and Post-Soviet Conflicts: Stealth Intervention, 1st edition, Routledge, Abingdon, 2011, p. 105:

<sup>37</sup> Տե՛ս Marco Siddi, Nagorno Karabakh: Security Situation, p. 7:

խան իրավական հիմքերի և գործնական հնարավորությունների ստեղծում, որոնք թույլ կտան նրան Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելիս իրականացնելու ուղղակի գործողություններ և մասնակցելու միջնորդական գործընթացին:

ԵՄ-ին ուղղված առաջարկների շարքում իրավական տեսանկյունից հատուկ ուշադրության են արժանի ԵԱՀԿ Մինսկի խմբում ԵՄ անմիջական ներգրավվածությանը վերաբերող դիտարկումները: Դրանք հիմնականում նախատեսում են ԵՄ ներառել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների եռյակում՝ փոխարինելով Ֆրանսիային<sup>38</sup> կամ ծայրահեղ դեպքում Ֆրանսիայի միջոցով արդյունավետ հնչեցնել ԵՄ դիրքորոշումն այդ ձևաչափում<sup>39</sup>: ԵՄ-ի համար իր ներգրավվածությունն ապահովելու հնարավոր տարբերակ կարող է լինել Ֆրանսիայի փոխարինումը Ֆրանսիացի դիվանագետով, ով լիազորված կլինի ներկայացնել ԵՄ: Այս դեպքում ԵՄ կծանրացնի իր կշիռը՝ չվնասելով Փարիզի դիվանագիտական կերպարը<sup>40</sup>: Սակայն հարկ է նշել, որ ԵԱՀԿ Մինսկի խմբում Ֆրանսիայի փոխարինումը ԵՄ-ով իրավական տեսանկյունից գրեթե անհնար է, քանի որ առկա են մի շարք ընթացակարգային և ինստիտուցիոնալ բնույթի խնդիրներ: Ընթացակարգային առումով ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ նշանակելու կարգը չի նախատեսում Ֆրանսիան ԵՄ-ով փոխարինելու հնարավորություն<sup>41</sup>, իսկ ինստիտուցիոնալ խնդիրն այն է, որ Մինսկի խմբի մանդատը հաստատվել է ԵԱՀԿ-ի կողմից, և ԵՄ չի կարող փոխարինել նրան<sup>42</sup>: Ֆրանսիան ԵՄ-ով փոխարինելու տարբերակը քիչ հավանական է նաև քաղաքական նկատառումներից, քանի որ դա կարող է վտանգել առանց այն էլ փխրուն բանակցային գործընթացը: Թերևս այս ամենը գիտակցում են Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելու գործընթացում ներգրավված բոլոր միջազգային դերակատարները՝ բացի Ադրբեյջանից: Վերջինս բազմիցս իր դժգոհությունն է հայտնել ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեությունից՝ դրական գնահատելով Ֆրանսիային փոխարինելու գաղափարը<sup>43</sup>: Սակայն, հակառակ Ադրբեյջանի պնդումների, հարկ է հավաստել, որ ԵԱՀԿ Մինսկի խումբը, չունենալով այլընտրանք, ներկայումս Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման միակ ձևաչափն է: Այս հանգամանքը թերևս միակն է, որ արդարացնում է ԵԱՀԿ Մինսկի խմբի ձևաչափին առավելագույն աջակցություն ցուցաբերելու ԵՄ քաղաքականությունը:

Այսպիսով, Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելու գործում ԵՄ ուղղակիորեն ներգրավված չէ: ԵՄ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը կարգավորելուն հիմնականում առնչվում է երկու գործիքի՝ ԵՀԲ-ի և Հարավային Կովկասում և Վրաստանի ձգնաժամի հարցերով ԵՄ հատուկ ներկայացուցչի միջոցով: ԵՄ գործնականում հակամարտությունը կարգավորելու ծրագրեր չի իրականացնում և չի մասնակց-

<sup>38</sup> Տե՛ս Franziska Smolnik, *Lessons Learned? The EU and the South Caucasus De Facto States*, *Caucasus Analytical Digest (CAD) No. 35-36* ([www.laender-analysen.de](http://www.laender-analysen.de)), Bremen, 15 February 2012, p. 5:

<sup>39</sup> Տե՛ս Stefan Wolff, նշվ. աշխ., p. 5:

<sup>40</sup> Տե՛ս Nicu Popescu, *EU Foreign Policy and Post-Soviet Conflicts: Stealth Intervention*, p. 105:

<sup>41</sup> Տե՛ս CSCE Budapest Summit Declaration, *Towards A Genuine Partnership In A New Era*, Budapest, 21 December 1994 (DOC.RC/1/95):

<sup>42</sup> Տե՛ս Mandate for the Co-Chairmen of the Minsk Process, Issued by the Hungarian OSCE Chairmanship, Vienna, 23 March 1995 (DOC. 525/95):

<sup>43</sup> Տե՛ս Tigran Mkrtchyan, Tabib Huseynov, Kakha Gogolashvili, *The European Union and the South Caucasus: Three Perspectives on the Future of the European Project from the Caucasus*, *Europe in Dialogue 2009/01*, Bertelsmann Stiftung, Gütersloh, 2009, p. 79:



ցում միջնորդական գործընթացին: Նման անուղղակի ներգրավվածությունը, անշուշտ, ԵՄ-ի կողմից իրականացվող քաղաքականության հետևանք է, քանի որ իրավական տեսանկյունից ԵՄ ունի բոլոր անհրաժեշտ հնարավորություններն իրականացնելու առավել ակտիվ գործունեություն՝ զգալի ներդրում ունենալով հակամարտության հետագա կարգավորման գործում:

## **INDIRECT INVOLVEMENT OF THE EUROPEAN UNION IN THE RESOLUTION OF NAGORNO-KARABAKH CONFLICT (legal analysis)**

**Arshak HAYRAPETYAN**

*Post-graduate Student of the Institute of Philosophy,  
Sociology and Law of the NAS RA*

The article examines the indirect involvement of the European Union (EU) in the resolution of Nagorno-Karabakh conflict. The research is based on political-legal acts adopted by the EU institutions concerning the resolution of Nagorno-Karabakh conflict. It mostly focuses on European Neighbourhood Policy and EU Special Representative for the South Caucasus and the crisis in Georgia as for two main instruments related to the Nagorno-Karabakh conflict resolution. The article also analyses the future direct involvement perspectives and opportunities of the EU in the resolution of Nagorno-Karabakh conflict and makes appropriate recommendations. Finally, it introduces the legal and political problems of changing the OSCE Minsk Group format in case of upgrading the French chair in the Minsk Group to the European level.

## **КОСВЕННОЕ ВОВЛЕЧЕНИЕ ЕВРОПЕЙСКОГО СОЮЗА В РАЗРЕШЕНИЕ НАГОРНО-КАРАБАХСКОГО КОНФЛИКТА (правовой анализ)**

**Аршак АЙРАПЕТЯН**

*Аспирант Института философии, социологии и права НАН РА*

В статье рассматривается косвенное вовлечение Европейского союза (ЕС) в разрешение Нагорно-карабахского конфликта. Исследование основано на принятых институтами ЕС политико-правовых актах, касающихся урегулирования Нагорно-карабахского конфликта. В статье основное внимание уделяется на Европейской политике соседства и Специального Представителя ЕС по вопросам Южного Кавказа и кризиса в Грузии, как двух основных инструментов, касающихся разрешения Нагорно-карабахского конфликта. В статье также анализируются перспективы и возмож-

ности будущего прямого вовлечения ЕС в разрешение Нагорно-карабахского конфликта и делаются соответствующие рекомендации. В конце исследования представляются правовые и политические проблемы изменения формата Минской группы ОБСЕ: в случае преобразовании французского сопредседательства в Минской группе до европейского уровня.

**Բանալի բառեր** – Լեռնային Ղարաբաղ, հակամարտության կարգավորում, իրավական վերլուծություն, անուղղակի ներգրավվածություն, Հարավային Կովկաս, ԵԱՀԿ Մինսկի խումբ, Եվրոպական հարևանության քաղաքականություն, Հարավային Կովկասում և Կրաստանի ձգնաժամի հարցերով ԵՄ Հատուկ ներկայացուցիչ

**Ключевые слова:** Нагорный Карабах, разрешение конфликта, правовой анализ, косвенное вовлечение, Южный Кавказ, Минская группа ОБСЕ, Европейская политика соседства, Специальный Представитель ЕС по вопросам Южного Кавказа и кризиса в Грузии

**Key words:** Nagorno-Karabakh, conflict resolution, legal analysis, indirect involvement, South Caucasus, OSCE Minsk Group, European Neighbourhood Policy, EU Special Representative for the South Caucasus and the crisis in Georgia